

էի , քան թէ 1754 թն Ռարիզէն ելած ատենա , որովհետեւ հասութիս քիչութիւնը օրինաւոր ժառանգութեանս բաժնէն լեցուցեր էի իմ ձանապար . Հորդութեանցս մէջ : Ի՞սյօ հարուստ էի հին ու հազուագիւտ յիշատակարաններով , ու զանազան հմտութիւններով՝ զորոնք կը յուսայի հանգստեամբ կարգի դնել ու մատենագրել , որովհետեւ դեռ հաղիւ երեսուն տարուան կայի . և միայն այս բաղդին հանդիպելու համար Հնդկաստան գացեր էի :

Պարթէլսմի մատենագիրը խրախոյս ու քաջալերութիւն տուած էր Ենքըդիլի իր առաջին գրաւոր աշխատութիւններուն մէջ . անոր համար ձանապարհորդութենէն դառնալէն ետքն ալշատ ջանաց ու յաջողեցաւ թագաւորական գրատան մէջ արեելեան լեզուաց թարգման դնելու զինքը՝ հասոյթ ալկապելաւալով իրեն . 1763 թն Պեղեցիկ դպրութեանց Ճեմարանին ընկեր ընդունուելով Ենքըդիլ , իր բոլոր զբաղմունքն եղաւ կարգի դնել իր հաւաքած ընտիր տեղեկութիւնները տպագրելու համար : Ի՞սյօ Հեղափոխութեան յուզմունքները վրայ գալով՝ տակնուվրայ ըրին իր զիտնական զբաղանքները . ուստի իր ուսումնարանը առանձնանալով՝ իր սիրելի գիրքերովը միայն կը զըւարձանար : Խրբոր Պաղպիոյ Ա արժոցը՝ նորէն հաստատուեցաւ , զինքն ալանդամ ընտրեցին . սակայն քիչ մը ատենէն հրաժարեցաւ : Ա երջապէս՝ իր անխոնջ աշխատութիւններուն յոգնութենէն , ու ծերութեան հիւանդութիւններէն Ճնշուելով , 1805 թն կնքեց իր բազմարդիւն կեանքը : Աւրիշ հրատարակած բաներէն զատ՝ տպած է Զէնտ-Ա-է-ստան , կամ Հաւաքումն սըրբազան գրոց Փալրսից . Յարաբէրութիւննէն Հնդկաստանու ընդ Ե-րոպայ , ու Ո-բնէն՝ հադ , այսինքն Գաղպանիւ լուլիւ գրքին պարսկերենէ ՚ի լատին թարգմանութիւնը : Ենքըդիլ նմանապէս խել մը հետաքրքրական ձառեր զրեց Պարս-

կաստանի լեզուաց ու հնութիւններուն վրայօք , որոնք տպուած են Պարձանագրութեանց և գեղեցիկ դպրութեանց Ճեմարանին ձառերուն հաւաքմանցը մէջ :

## ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Ք. Էւգենի Դարուց անուանութեան :

Գրիստոսի թուականէն սկսեալ՝  
Առաջին դարը Կըսուի Փրկութեան դար .  
Բ . դ . Սրբոց դար .  
Գ . դ . Մարտիրոսաց և Ճինաւորաց դար .  
Դ . դ . Վարդապետաց եկեղեցւոյ դար .  
Ե . դ . Հիւսիսային բարբարոսաց դար .  
Զ . դ . Իրաւագիտութեան դար .  
Է . դ . Մահմետականութեան դար .  
Ը . դ . Սարակինոսաց դար .  
Թ . դ . Նորմանտացւոց դար .  
Ժ . դ . Տգիառութեան դար .  
ԺԱ . դ . Խաչակրաց դար .  
ԺԲ . դ . Կրօնաւորական կարգաց դար .  
ԺԳ . դ . Տաճկաց դար .  
ԺԴ . դ . Հրազինուց դար .  
ԺԵ . դ . Նորութեանց դար .  
ԺԶ . դ . Գեղեցիկ դպրութեանց դար .  
ԺԷ . դ . Նաւարկութեան ու զինուորական Ճարտարապետութեան դար .  
ԺԸ . դ . Ազգաց արթնալու դար .  
Խակ ԺԸ . դարը , որ է հիմակուանը , Ճարտարութեան դար հար հաւանականապէս պիտի սեպուի :

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Շաբաթ ծոյն ՏԸ :

Գաղպիոյ մէջ Ռաքէթ անունով գեղին մատ , որ Գասդրը քաղքէն փարսսախ մը հեռու է , ձուաձեժայու մը կայ . բաւական բարձր է ասիկայ , և լայնութիւնը 26 ոտք է ամենէն աւելի ընդարձակ կտորին , իսկ 12 ոտք՝ յատակին : Զարմանալին այն է՝ որ գաւազանով մը կամ ձեռքովդ գպչելու ըլլաս ասոր , խիստ զգալի կերպով կ'երերայ ու կը ճօճի : Ամէն Ճանապարհորդներն որ ան կողմերը կ'երթան , զանց չեն առներ երթալու անձամբ փորձելու աս հետաքրքրական երկոյթը :

